



ԱՊԱՐԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ

Հասցե. ՀՀ Արագածոտնի մարզ 3103,
ք.Ապարան, Բաղրամյան 26
Հեռ. /ֆաքս/ +/ 0252/ 6 23 60
Էլ.փոստ aarhusaparan@mail.ru
Info_aparan@aarhus.am

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության պետ՝ Յուրա Ազատյան

Ապարանի Օրհուս կենտրոնի
համակարգող՝ Նատայյա Մանուկյանից

28.05.2015թ.

Հարգելի՛ պարոն Ազատյան.

Ապարանի Օրհուս կենտրոնն ահազանգ էր ստացել այն մասին, որ Արագածոտնի մարզում գտնվող Ապարանի ջրամբարի ափամերձ մասերում նկատվել է մեծ քանակությամբ սատկած ձուկ:

Իրողությունը պարզելու նպատակով մայիսի 27-ին կենտրոնն այց կազմակերպեց ջրամբար: Այցելության ընթացքում պարզվեց, որ ձկների զանգվածային անկման մասին ահազանգը համապատասխանում է իրականությանը: Ջրամբարի արևմտյան մասում. (Քուչակ գյուղի ափամերձ հատված) իրոք մեծ քանակությամբ սատկած ձուկ (սագան- կարաս) կար: Ձկնորսների հետ զրույցից պարզվեց, որ մոտ մեկ շաբաթ է, ինչ նկատվում է այս երևույթը: Հարկ է նշել, որ ջրամբարի արևելյան ափին սատկած ձուկ չկար: Ջրամբարի այս հատվածում գտնվող ձկնորսները այստեղ ոչ մի արտառոց բան չեն նկատել:

Հարգելի՛ պարոն Ազատյան.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները,
ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին»
ՀՀ օրենքի դրույթները, ելնելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու
անվտանգության պաշտպանության և բնակչությանը հավաստի տեղեկատվության
տրամադրելու կարևորությունից,

խնդրում եմ պարզել ջրամբարում ձկների անկման պատճառը և այս խնդրի առնչությամբ
պաշտոնական տեղեկատվության տրամադրել Ապարանի Օրհուս կենտրոնին:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող

Նատայյա Մանուկյան